ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022 թ.

Քննարկելով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) 2021 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեության արդյունքները՝ ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովն արձանագրում է, որ հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ նախագահության, բաժանմունքների և գիտական կազմակերպությունների գործունեությունն ուղղված է եղել գիտության տարբեր բնագավառներում հիմնարար և կիրառական հետազոտությունների իրականացմանը, գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքների պահպանմանն ու արդիականացմանը, միջազգային համագործակցության զարգացմանը, հանրապետության ռազմարդյունաբերական համակարգի տարբեր օղակների աշխատանքներին մասնակցությանը և ակադեմիայի զարգացման ծրագրերի մշակմանը:

2021 թ. ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպություններն իրականացրել են գիտական և գիտահետազոտական աշխատանքներ 5 նպատակային, 44 բազային, 186 տնտեսական պայմանագրային ծրագրերով և ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող 313 թեմաներով: Ստացված արդյունքներով հրապարակվել են 160 մենագրություն և ժողովածու (20-ն արտասահմանում), 21 ուսումնական ձեռնարկ և դասագիրք, 1550 հոդված գրախոսվող ամսագրերում (615-ն արտասահմանում), 481 հոդված գիտաժողովների նյութերի ժողովածուներում (210-ն արտասահմանում), 349 թեզիս (187-ն արտասահմանում):

Շարունակվել է համագործակցությունը բուհերի հետ՝ գիտաուսումնական կառույցների շրջանակներում իրականացվել են համատեղ ծրագրեր, ակադեմիայի մոտ 400 գիտնական դասախոսել է բուհերում: ԳԱԱ-ն զարգացրել է նաև համագործակցությունն արտասահմանյան և միջազգային գիտական կառույցների ու գիտությունների ակադեմիաների հետ: Մասնավորապես ակադեմիայի գիտական կազմակերպությունները մասնակցել են երկկողմ և բազմակողմ միջազգային մի շարք համագործակցային ծրագրերի իրականացմանը, այդ թվում՝ «Հորիզոն 2020-ի»,

Արևելյան գործընկերության երկրների գիտատեխնիկական համագործակցության և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի շրջանակներում: Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի միջև ստորագրվել է գիտատեխնիկական համագործակցության մասին համաձայնագրի դրույթների իրականացման ճանապարհային քարտեզը, որի 54 համատեղ առաջարկությունները ներառում են գիտության տարբեր ոլորտներ:

2021 թ. ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպություններում իրականացվել է գիտական կադրերի ատեստավորում, որի արդյունքում, համաձայն ՀՀ կառավարության 2021 թ. մայիսի 13-ի N 747-Լ որոշման, բարձրացվել են գիտաշխատողների աշխատավարձերը:

Ակադեմիան ակտիվորեն մասնակցել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի լրամշակման և ակադեմիային վերաբերող որոշ կետերի փոփոխման աշխատանքներին: Արդյունքում՝ խմբագրվել է օրենքի նախագծում ԳԱԱ վերաբերող 26-րդ հոդվածը, մասնավորապես ակադեմիայի համար սկզբունքային նշանակություն ունեցող 1-ին կետը, որն ապահովում է գիտական կազմակերպությունների հետագա գործունեությունը ԳԱԱ համակարգում:

2021 թ. վերջին սկսվել է մշակվել և այժմ ավարտման փուլում է ՀՀ ԳԱԱ 2022-26 թթ. զարգացման ռազմավարությունը, որը նպատակ ունի բարձրացնել ակադեմիայի կազմակերպություններում իրականացվող հետազոտությունների արդյունավետությունը, ամրապնդել գիտություն-կրթություն-արտադրություն կապը, նպաստել ակադեմիայի կազմակերպությունների ինտեգրմանը միջազգային հետազոտական տարածք, արդյունքում՝ ապահովել ակադեմիայի համակարգի կայուն զարգացումը:

Մշակվում է նաև ԳԱԱ կառուցվածքային բարեփոխումների ծրագիրը, որով նախատեսվում է կենտրոնացնել ակադեմիայի ռեսուրսները գիտության արդի չափանիշներին համապատասխան հիմնարար և/կամ հանրապետության տնտեսության պահանջներից բխող կամ ազգային անվտանգության ամրապնդմանն ուղղված հետազոտությունների վրա, ձևավորել ժամանակակից գիտահետազոտական, գիտաարտադրական, գիտաուսումնական կամ գիտաարտադրաուսումնական կենտրոններ՝ զարգացման և ակնկալվող

արդյունքների վերաբերյալ հստակ պատկերացումներով:

Գիտական կադրերի վերարտադրության արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հենքի վրա ստեղծել հետազոտական համալսարան, որի առաջնային խնդիրը լինելու է հանրապետության գիտական կազմակերպությունների պահանջարկով պայմանավորված բարձր որակավորմամբ կադրերի պատրաստումը:

Ելնելով վերոշարադրյալից՝ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը որոշում է՝

1. Հավանություն տալ ԳԱԱ 2021 թ. գիտական և գիտակազմակերպական գործունեությանը:

2. Ձեռնարկել միջոցներ՝ ԳԱԱ 2022-26 թթ. զարգացման ռազմավարության, ԳԱԱ կառուցվածքային բարեփոխումների և ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հենքի վրա հետազոտական համալսարանի ձևավորման ծրագրերի մշակման և ներդրման ուղղությամբ:

3. Վերանայել գիտական կազմակերպությունների հետազոտությունների թեմատիկաները՝ հաշվի առնելով ինչպես հետազոտությունների արդիականությունը, կադրային ապահովվածությունը, այնպես էլ հանրապետության կարիքների բավարարման անհրաժեշտությունը:

4. Կենտրոնացնել ԳԱԱ համակարգի ռեսուրսները հայագիտության հետագա զարգացմանը միտված ուսումնասիրությունների կամ արդի չափանիշներին համապատասխան նշանակալի հիմնարար և/կամ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանն ու ազգային անվտանգության ամրապնդմանն ուղղված կիրառական հետազոտությունների կատարման վրա:

5. Պարբերաբար գնահատել համակարգի գիտական կազմակերպությունների աշխատանքների արդյունքների նորարարական և ներդրումային ներուժը, առևտրայնացման ենթակա արդյունքների ամփոփագրերը ներկայացնել համապատասխան պետական մարմիններին և ձեռնարկություններին՝ տնտեսության մեջ դրանց ներդնելու նպատակով:

6. Աջակցել պահանջարկով պայմանավորված հետազոտական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:

7. Ընդլայնել ԳԱԱ գիտական կազմակերպությունների համագործակցությունը բուհերի և արտադրական ձեռնարկությունների հետ:

8. Աջակցել ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպությունների միջգիտակարգային հետազոտությունների ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքներին, բարձրացնել այդպիսի հետազոտությունների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ:

9. Ընդլայնել Արցախի և Սփյուռքի գիտնականների ներգրավումը ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների գիտահետազոտական խմբերում՝ զարգացնելով համագործակցությունը Արցախի գիտական կենտրոնի հետ:

10. Աջակցել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը՝ Սևանա լճի ընթացիկ վիճակի մշտադիտարկման և բարելավման գործընթացում: Դիմել նախարարությանը՝ լճի մակարդակը բարձրացնելու անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու առաջարկությամբ և մոտակա ժամանակներում կազմակերպել այդ հարցին նվիրված գիտաժողով:

11. Ակտիվացնել պայքարը հայ ժողովրդի պատմության ու ազգային մշակույթի յուրացումների և կեղծարարության դեմ: Բարձրացնել այդ ուղղությամբ միջազգային գիտական հանրության հետ տարվող աշխատանքների արդյունավետությունը, խթանել թեմային նվիրված օտարալեզու հրապարակումները և միջազգային գիտական միջոցառումների կազմակերպումն ու մասնակցությունը:

12. Աջակցել ԳԱԱ գիտական հանդեսների խմբագրակազմերի միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում այդ հանդեսներն ընդգրկելու քայլերի ձեռնարկմանը:

13. Առաջարկել ԳԱԱ նախագահությանը՝ գիտության ոլորտում պետական լիազոր մարմնի առջև բարձրացնել գիտական աշխատողների ատեստավորման նոր կարգի լրամշակման հարցը՝ հաշվի առնելով ակադեմիայի առաջարկությունները և այդ լրամշակման աշխատանքներում ուղղակի շահառուների՝ գիտական աշխատողների ներգրավման անհրաժեշտությունը:

14. Առաջարկել ԳԱԱ նախագահությանը՝ կառավարության առջև բարձրացնել

- գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծավալների ավելացման հարցը,
- գիտական կազմակերպությունների կողմից վարձակալության հանձնված տարածքների, շենքերի և շինությունների գումարների տնօրինումը կազմակերպություններին թողնելու հարցը,

- գիտական կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարումը համապատասխան պետական լիազոր մարմնի, իսկ ԳԱԱ համակարգում ներառված կազմակերպությունների դեպքում՝ ակադեմիայի թույլտվությամբ իրականացնելու հարցը:

15. Դիմել գիտության ոլորտում պետական լիազոր մարմնին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքում գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված փոփոխություններ կատարելու առաջարկով, մասնավորապես

- գնումների բազային միավոր սահմանել 5 միլիոն ՀՀ դրամը,
- արտաբյուջետային միջոցների օգտագործման վրա չտարածել այդ օրենքի կարգավորումները,
- եզակի գիտական սարքավորումների ձեռքբերման համար նախատեսել արտադրողից ուղիղ գնման հնարավորություն՝ համապատասխան պետական լիազոր մարմնի, իսկ ԳԱԱ համակարգում ներառված կազմակերպությունների դեպքում՝ ակադեմիայի թույլտվության հիման վրա:

16. Շարունակել հետևողական աշխատանքը կառավարության և Ազգային ժողովի հետ՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծում ակադեմիայի ներկա կարգավիճակը որպես գիտական կազմակերպությունների համակարգ պահպանելու ուղղությամբ: Միաժամանակ անհրաժեշտ է ԳԱԱ վերապահել պետական լիազոր մարմնի առանձին գործառույթներ, այն է՝ ակադեմիան իրականացնում է իր համակարգի կազմակերպությունների ընդհանուր կառավարումը, սահմանում է կառավարման մարմիններին առաջադրվող պահանջները և դրանց ձևավորման կարգը:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀ Ա.Ս.ՍԱՂՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.Մ.ԻՇԽԱՆՅԱՆ